իւրացրած նախարարներից տասը դարի ընթացքում նոյնիսկ տասը մեկենաս էլ չի գտնուում, որ գոնէ տասը հատոր գրել-նկարագրել տային եւ թողնէին իրենց յաջորդ սերնդին: 400 թ. մինչեւ 1400 թ. Բագրատունիների եւ Ռուբինեանների վախճանը Հայաստանին տիրել եւ ժողովրդին կեղեքել են մի քանի հարիւր նախարարական տոհմեր, որոնք կեղեքել են միլիոնաւոր բնակչութիւնը, իսկ այս հազարաւոր նախարարներից մեկենասներ չեն երեւացել, որ գոնէ 40—50 հատոր յիշատակարաններ գրել տային, յիշատակ թողնէին: Հազար տարուան մէջ հազարաւոր գրագէտ գիտնականները կարողացել են մի քանի հարիւր կտոր կրօնական, եկեղեցական հաստափոր հատորներ թողնել, շարականներ, քարոզներ եւ մեկնութիւններ գրել. մի՞թէ չէին կարող 15 նահանգների մանրազնին աշխարհագրութիւնը թողնել, նահանգներով, գաւառներով, գիւղերով, լեռներով, առուակներով եւ վտակներով բաժանուած: Պարսից արքայից-արքաների շրջանում, Իսլամի Խալիֆների օրով, Օսմանեան Սուլթան Սէլիմի դարում ամբողջ հայ աշխարհի բոլոր աւանները, գիւղերը, ամառանոցները, ձմեռանոցները ցուցակագրուած են իրենց բովանդակած ծխերի թւով պետական հարկային տոմարներում, մի՞թէ ամէն մի նախարար իր վիճակի աշխարհահամարը չու-